ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2017 թվականի N 82_Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 7-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգող, մշտական գործող հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009 թվականի փետրվարի 3-ի N11-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N14-Ա որոշմամբ հաստատված հավելվածում «Հ. Խաչատրյան» պարբերությունից առաջ լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«Կ. Գասպարյան — ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացուցիչ (համաձայնությամբ)»:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կից Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի, և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 2017 թվականի օգոստոսի 24-ի N 01/14.1/15666-17 գրավոր առաջարկությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2017թ. օգոստոսի 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

N 01/14.1/15666-17
«24» 08 2017 թ.

Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետ
պարոն Վ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի օգոստոսի 4-ին N 01/12/5693-17 գրության՝ ՀՀ Սյունիքի մարզի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը կազմող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգող, մշտական գործող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջարկում եմ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ Կարեն Գասպարյանի (հեռ. 010-59-00-40) թեկնածությունը:

Հարգանքով՝

Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ՝ Կ. Գասպարյան 590040
K005

Հայաստանի Հանրապետություն Երևան 0010, Նալբանդյան 28 Հեռ (374 10) 59 00 01 , Ֆաքս՝ (374 10) 58 05 28, էլ փոստ mintrans@mtc.am